

5.26. 2011 թվականի մարտ ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մարտին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմային մոտ, Արարատյան դաշտավայրում՝ նորմայից բարձր 0.5-1.3 աստիճանով, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ նորմայից ցածր 0.2-0.7 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-4 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով), երկրորդ տասնօրյակում՝ բարձր 0.5-2 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ բարձր 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +13 +14°C, Արարատյան դաշտավայրում՝ +12 +14°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +9 +12°C, ՀՀ Լոռու մարզում՝ +5 +9°C, Սյունիքի նախալեռներում՝ +7 +9°C, լեռնային շրջաններում՝ +1 +6°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մարտի 27-31-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +22 +25°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +18 +21°C, Արարատյան դաշտավայրում՝ +20 +22°C, ՀՀ Լոռու մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +16 +19°C, Սյունիքի նախալեռներում՝ +18 +19°C (ք.Միսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +15°C), լեռնային շրջաններում՝ +8 +12°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում կազմել է -3 -8°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -10°C), ՀՀ Տավուշի մարզում՝ -3 +2°C, Արարատյան դաշտավայրում՝ 0+2°C, Սյունիքի նախալեռներում՝ -1-4°C, Սյունիքի հովիտներում՝ +1 +4°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մարտի 4-6-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -13-18°C (Աշոցք գյուղում՝ -24°C), Սյունիքի նախալեռներում՝ -9-10°C (ք.Միսիանում՝ -17°C), ՀՀ Լոռու մարզում՝ -9-12°C (ք.Տաշիրում՝ -20°C), Արարատյան դաշտավայրում՝ -5-8°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -6-11°C (ք.Դիլիջանում՝ -13°C), Սյունիքի հովիտներում՝ 0 -4°C:

Մարտ ամսվա ընթացքում տեղումների քանակը ՀՀ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում կազմել է նորմայի 82-113%-ը, ՀՀ Լոռու մարզում՝ 67-92%, ՀՀ Տավուշի մարզում՝ 66-177%, Արարատյան դաշտավայրում՝ 52-125%, Սյունիքի նախալեռներում՝ 60-75%, Արագածոտնի նախալեռներում՝ 73-100%, Սյունիքի հովիտներում՝ 45-68%:

Մարտի 2-3-ին արևելյան և լեռնային շրջաններում, 13-14-ին ՀՀ Սյունիքի մարզում, 7-12-ին և 22-24-ին տարաշրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ ձյուն: Ձյան ծածկույթի բարձրությունը մարտի 31-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 175 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 90 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 75 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 49 սմ, ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 44 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 42 սմ, Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 27 սմ, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 20 սմ, Աշոցք գյուղում՝ 18 սմ, Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 12 սմ, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 6 սմ, Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 2 սմ, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 1 սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:

Մարտի 7-10-ին արևելյան առանձին շրջաններում և Արարատյան դաշտավայրի առանձին վայրերում, 11-23-ին ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Մարտի 4-7-ին և 24-27-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 9-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-24 մ/վրկ: Հանրապետության գետերի միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-140%-ը:

Սևանա լճի մակարդակը մարտ ամսվա ընթացքում բարձրացել է 4 սմ-ով և մարտի 31-ի դրությամբ կազմել 1900.00 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 38 սմ-ով: